ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
Էլ. հասցե sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.09.2020
346-66

ՀՀ Կրթության, գիտության,
մշակույթի ու սպորտի նախարար
Արայիկ Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2020թ. օգոստոսի 27-ին հարցում էր ուղարկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարություն՝ ճշտելու, թե ՀՀ դպրոցներից քանիսն են լիարժեք համապատասխանում Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման Ուղեցույցով սահմանված պայմաններին: 2020թ. սեպտեմբերի 7-ին պատասխան գրությամբ նախարարությունը տեղեկացրել է, որ Ուղեցույցով սահմանված կանոնների վերահսկողությունն իրականացնում է ՀՀ Կրթության տեսչական մարմինը, և խորհուրդ էր տրվել դիմել այդ կառույցին (պատասխան գրությունը կցվում է):

2020թ. սեպտեմբերի 9-ին ԻԱԿ-ը նույնաբովանդակ հարցմամբ դիմել է ՀՀ Կրթության տեսչական մարմին, որը սեպտեմբերի 15-ին պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողական լիազորություններ ՀՀ կրթության տեսչական մարմնին վերապահված չեն (գրությունը կցվում է):

Այս հակասական պատասխանների արդյունքում խախտվել է ԻԱԿ-ի և հանրության՝ տեղեկություն ստանալու իրավունքը:

Ուստի եւս մեկ անգամ դիմում ենք Ձեզ՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Արդյոք հանրակրթական պետական հաստատություններում և մասնավոր դպրոցներում նախնական դիտարկում իրականացվե՞լ է, ՀՀ դպրոցներից քանի՞սն են լիարժեք համապատասխանում Ուղեցույցում նշված պայմաններին:

2. Խնդրում ենք նշել այդ դպրոցների ցանկը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան